Հավելված 1

Հաստատում եմ՝ ____________ Գ. Գրիգորյան

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական

կենտրոն» հիմնադրամի տնօրեն

«10» նոյեմբերի 2023 թ.

Կ.Տ.

# ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

# ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՌՋԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ

# ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կարգը սահմանում է «ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամում (այսուհետ՝ հիմնադրամ) ներքին և արտաքին շահակիցների ներգրավումը որակի ապահովման գործընթացում և նրանց առջև հաշվետվողականության քաղաքականությունը:

Հիմնադրամում ներքին և արտաքին շահակիցների ներգրավումը որակի ապահովման գործընթացում և հաշվետվողականությունը նրանց առջև նպատակ է հետապնդում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան բարելավել կրթության որակը՝ միաժամանակ բավարարելով շահակիցների կարիքները, ապահովելով հիմնադրամի գործունեության թափանցիկությունը:

### 1. ՆԵՐՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Հիմնադրամի ուսանողների մասնակցությունը որակի ապահովման գործընթացում իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

- Ներգրավվածություն ուսումնական գործընթացին առնչվող խորհուրդներին (ուսումնամեթոդական խորհուրդ, կարգապահական խորհուրդ, ծնողական խորհուրդ):
- Մասնակցություն որակի ապահովման ուսանողական հանձնաժողովին:
- Մասնակցություն կրթության որակի գնահատման գործընթացին:
- Մասնակցություն դասավանդողների գնահատման գործընթացին:

1.2 Հիմնադրամի դասավանդողների մասնակցությունը որակի ապահովման գործընթացում իրականացվում է հետևյալ ուղղություններով

- Ներգրավվածություն ուսումնական գործընթացին առնչվող խորհուրդներին:
- Մասնակցություն մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, գնահատման և բարելավման գործընթացին:
- Թեմատիկ պլանների մշակում:
- Փոխադարձ դասալսումների իրականացում և վերլուծություն:
- Հիմնադրամում առկա ռեսուրսների գնահատում:
- Աշխատանքային միջավայրի գնահատում:

## 2. ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Գործատուների մասնակցությունը որակի ապահովման գործընթացում իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

- Ներգրավվածություն ավարտական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում:
- Ներգրավվածություն մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, վերանայման և գնահատման գործընթացներում:
- Մասնակցություն Հիմնադրամի գործունեության գնահատման գործընթացին:
- Արտադրական պրակտիկայի արդյունքների ամփոփում և գնահատում:
- Վարպետաց դասերի իրականացում:

2.2 Շրջանավարտների մասնակցությունը որակի ապահովման գործընթացում իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

- Ներգրավվածություն մասնագիտական կրթական ծրագրերի գնահատման գործընթացում:
- Ներգրավվածություն նյութատեխնիկական հագեցվածության գնահատման գործընթացում:
- Ներգրավվածություն Հիմնադրամի ընդհանուր գործունեության գնահատման գործընթացում:

## 3. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՋԵՎ

3.1 Արտաքին և ներքին շահակիցների առջև հաշվետվողականությունը ապահովում է Հիմնադրամի իրականացրած գործունեության թափանցիկությունը:

3.2 Հաշվետվողականություննն իրականացվում է հետևյալ եղանակով՝

- Հոգաբարձուների խորհրդի նիստին ներկայացվող գործունեության տարեկան հաշվետվություն:
- Հոգաբարձուների խորհրդի նիստին ներկայացվող ֆինանսական տարեկան հաշվետվություն:
- Եռալեզու թերթ (ՖՀՄՈՒԿ-յան ակնարկներ) :
- Ուսումնամեթոդական խորհրդի նիստին ներկայացվող հաշվետվություն:
- Գործունեության լուսաբանում սոցիալական հարթակներում:
- Հիմնադրամի կայք-էջ:
- Այլ:

Սույն կարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից: